ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1958 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանը հարստացավ հայ ժողովրդի XVI—XVIII դարերի և XIX դարի առաջին կեսի պատմությանը նվիրված մշտական ցուցադրությամբ։

Ցուցահանդեսը սկսվում է երկու դեսպոտական, ռազմաֆեոդալական պետությունների՝ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետությունների լծի ներքո հայ ժողովրդի ծանր ու ողբերգական վիճակը բացահայտող նյութերով։ Հիշատակության արժանի է Հ. Զարդարյանի մեծ վարպետությամբ կատարված կոմպոզիցիոն նկարը, ուր ցույց է տրվում 1604 թ. 350 հազար հայերի բռնի գաղթեցումը Պարսկաստանի խորքերը՝ Սեֆյան դինաստիայի ամենադաժան դեմքերից մեկի՝ Շահ-Աբասի հրամանով։ Լուր ստանալով օսմանյան բանակի արագ առաջխաղացման մասին, Շահ-Աբասը զենքի սպառնալիքով հարկադրում է գաղթող բնակչությանը անցնել Արաքսի մյուս ափը։ Այդ խառնիխուռն զանգվածի մի մասը զոհ է գնում Արաքսի վարար ջրերին, շատերը կողոպուտի ու գերեվարության են ենթարկվում զինվորների կողմից։ Անապատի են վերածվում Արևելյան Հայաստանի երբեմնի շեն ու ծաղկուն գյուղերն ու քաղաքները։

Մեծ հետաքրքրություն են առաջացնում նաև ժողովրդի կենցաղը բնորոշող տնային գործածության իրերը՝ մեծ ճաշակով ու նրբությամբ պատրաստված պղնձյա, փայտյա, անգամ քարե ամանները, կավից ու տարբեր այլ մետաղներից պատրաստված ճրագները, ջրի սափորները, աղամանները, խնկամանները, կողպեքները և այլ տնային պարագաները։ Գեղարվեստական հաճույք են պատճառում հայկական ձեռագործների, ասեղնագործության և դաճված կտորների նմուշները։

Հայ գյուղացիության կյանքի ու կենցաղային պայմանների մասին շատ պարզ ու որոշակի պատկերացում կարելի է կազմել «Հայ գյուղը», ինչպես և «Գյուղացու տունը» ցուցադրված մակետներից։

Հետաքրքրությամբ են դիտվում այդ ժամանակ գործածվող սառը զենքերի, հրազենի տեսակները, ինչպես և ոսկերչության և այլ արհեստների վերաբերյալ եղած նյութերը և նրանց արտադրանքի նմուշները՝ XVI—XVIII դարերում։

Այցելուների հատուկ ուշադրությանն է արժանանում Հնդկաստանի Ագրա քաղաքում XVII դարում կառուցված Թաջ-Մահալի՝ դամբարան-մզկիթի մակետը։ Համաշխարհային ճարտարապետության նշանավոր հուշարձան հանդիսացող այդ դամբարան-մզկիթի կառուցման աշխատանքներին մասնակցել են նաև հայ արվեստագետ վարպետները։

Թանգարանում մի շարք էքսպոնատներով պարզաբանված է հայկական կուլտուրայի զարգացման մակարդակը XVI—XVIII դարերում։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1512 թ. Վենետիկում լույս տեսած առաջին տպագրված գրքի օրինակը։

«Հայկական տպագրությունը XVI—XVIII դարերում» բաժնում ցուցադրված են հայ պարբերական առաջին մամուլի՝ «Ազդարար»-ի անվանաթերթը, Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը, Չամչյանի «Հայոց պատմութիւն» գործի ստվարածավալ հատորները, Առաքել Դավրիժեցու, Աբրահամ Երևանցու աշխատությունները և գիտության այլ ճյուղերի՝ բժշկության, աշխարհագրության վերաբերյալ գրքեր ու զանազան բառարաններ։

Բուն Հայաստանի տերիտորիայի վրա տպագրական գործը սկսվում է XVIII դարի երկրորդ կեսից միայն, երբ 1771 թ. էջմիածնում հիմնադրվում է առաջին տպարանը։ Ցուցադրված է այդ տպարանի հիմնադրման վիմագիր արձանագրությունը և այլն։

Հատուկ ցուցափեղկերում ներկայացված են գեղարվեստական արժեք ներկայացնող եկեղեցական հագուստեղենի և այլ իրերի ժողովածուները, հայկական երաժշտական գործիքների նմուշները, այդ թվում և Սայաթ-Նովային վերագրվող քյամանչան։

XVII—XVIII դարերում տնտեսական-քաղաքական կապեր են հաստատվում հայ ժողովրդի և Ռուսաստանի միջև։ Ցուցադրված են Իսրայել Օրու նկարը, նրա գործունեության հետ կապված փաստաթղթերը, մասնավորապես Իսրայել Օրու Պետրոս I-ի հետ վարած բանակցությունների պատճեններ և բազմաթիվ այլ նյութեր։

XVIII դարի առաջին քառորդում ազատագրական ձգտումները ուժեղանում են հատկապես Ղարաբաղում և Սյունիքում։

Բազմաթիվ նյութերով և գրաֆիկ նկարներով ցույց է տրված Երևանի պաշտպանությունը թուրքական բանակի հարձակումներից։ Մի այլ մեծ կտավի վրա պատկերված է, թե ինչպես Հաղիձորում մի գիշեր բերդապահ զորքի 300 կտրիճներ Մխիթար սպարապետի և տեր Ավետիսի առաջնորդությամբ հանկարծակի հարձակվում են թշնամու մեծաթիվ զորքերի վրա և խուճապի մատնում նրանց։

Ցուցահանդեսում եղած մի շարք փաստաթղթեր վկայում են ռուսական պետության բարյացակամ վերաբերմունքը հայ ժողովրդի պատվիրակությունների և ընդհանրապես այն բոլոր հայերի նկատմամբ, որոնք թուրք և պարսիկ հարստահարիչների դաժան հետապնդումներից խուսափելով՝ ապաստարան էին գտնում ռուսական տերիտորիաներում։ Ցուցափեղկերում է գտնվում Ելիզավետա Պետրովնայի հրովարտակը, որով հայ առևտրական Սաֆար Բարսեղյանին արտոնում է Հաշտարխանում (Աստրախանում) հիմնելու մետաքսագործական և բամբակագործական ֆաբրիկաներ (1742), ինչպես և Եկատերինա II-ի հրովարտակը, որով Ղրիմի հայերին թույլատրվում է Դոնի գետաբերանին հիմնելու Նոր-Նախիջևան քաղաքը, և նրանց տրվում են մի շարք այլ արտոնություններ (1779 թ.)։

Ցուցահանդեսի հաջորդ բաժինը նվիրված է Արևելյան Հայաստանի թուրքական և պարսկական զավթիչներից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու իրադարձությունների հետ կապված նյութերի ցուցադրմանը։ Ներկայացված ազգագրական հարուստ նյութերը՝ զգեստները, ամանները, լուսանկարները խոսում են այն մասին, որ մինչև XIX դարի սկզբները հայ ժողովուրդը շարունակում էր ապրել այդ տառապանքներով լի ժամանակաշրջանը։ Պարսկական պետության մեջ տիրող անարխիան ու տնտեսական ճգնաժամը ահռելի չափերի էր հասցրել գյուղացիությունից գանձվող հարկերն ու տուրքերը։

Անդրկովկասի ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող այդ հալածանքներն ու հարստահարությունները անհուն վրեժով և ատելությամբ էին լցնում նրանց դեպի թուրք-պարսկական խաները ու փաշաները։ Ազատագրական պայքարը գնալով դառնում է ավելի վճռական և այդ արդարացի պայքարը Ռուսաստանի օգնությամբ պսակվում է մեծ հաջողություններով։

1801 թ. Վրաստանի միացումը Ռուսաստանին, ինչպես և 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Շիրակի, Լոռի-Փամբակի, Նամշադինի, Զանգեզուրի, Ղափանի և այլ հայաբնակ վայրերի ազատագրումը մեծ չափով ուժեղացրեց Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ձգտումները։

1804—1813 թթ. Պարսկաստանի և 1806—1812 թթ. Թուրքիայի դեմ մղվող պատերազմների ընթացքում Ռուսաստանը մի շարք արշավանքներ է ձեռնարկում դեպի Արևելյան Հայաստան։ Այդ առթիվ էքսպոզիցիայում ներկայացված են ռազմական գործողությունների սխեմաներ, մի քանի ճակատամարտերի նկարներ և ժամանակի իրադարձությունները վերլուծող փաստաթղթեր։

Մեծ հետաքրքրությամբ է դիտվում 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների վերաբերյալ բաժինը։ Այստեղ ցուցադրվում են ռուսական, թուրքական և պարսկական զինվորական համազգեստները, զենքերի տեսակները, ռուսական հրամանատարության հրամանները պատճենները, պատերազմական գործողությունների սխեմաները, ռուսական բանակի տարած հաղթանակների պատվին կտրված մեդալները և այլն։

Ողջ ժողովուրդը ոտքի է կանգնում իր երկիրը օտարերկրյա լծից ու հալածանքներից ազատագրելու համար։ Թիֆլիսում, Ղարաբաղում և այլ քաղաքներում կազմակերպվում են կամավորական ջոկատներ, որոնք ունեին իրենց կանոնադրությունը, ազգային դրոշները և հայ հրամանատարները։ Նրանք պարենով, զինամթերքով մեծ օգնություն էին ցույց տալիս ռուսական բանակին։ Ցուցադրված կոչերից մեկում կարդում ենք. «...Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը... Ոտքի կանգնեցե՛ք, հայոց քաջեր, թոթափեցե՛ք պարսից լուծը, ուրախացրե՛ք ալեզարդ Մասիսին, մի անգամ սրյունով ներկեցե՛ք հայրենի հողերն ու ապա ապրեցե՛ք ազատ»։

Ցուցահանդեսում գրավոր փաստաթղթերի հետ միասին, ցուցադրված են և կամավորական ջոկատների դրոշները, կամավորի հագուստը և այլ նյութեր։

Այդ ենթաբաժնում կենտրոնական տեղ են գրավում Երևանի բերդի պաշարմանն ու գրավմանը նվիրված նյութերը։

Էքսպոզիցիայում ցուցադրված են Երևանի, Էրզրումի բերդերի բանալիները, Երևանի, Կարսի գրավման պատվին պատրաստած մեդալները, ավար վերցված պարսկական դրոշները, դեկաբրիստներ Պ. Կոնովնիցինի, Ա. Օդոևսկու, Մ. Պուշչինի, Ե. Լաչինովի, Պ. Բեստուժևի, բանաստեղծ պարտիզան Դ. Դավիդովի, արքեպիսկոպոս Ներսես Աշտարեկցու, գեներալներ՝ Երմոլովի, Կրասովսկու, Բեյբութովի լուսանկարները։

Ցուցադրված է Ա. Ս. Գրիբոյեդովի նկարը և նրա գործունեության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որտեղ ցույց է տրված ներգաղթի կարևոր նշանակությունը Հայաստանի ազգաբնակչության ազգագրական կազմը փոխելու, ինչպես և գյուղատնտեսության, արհեստների և առևտրի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ներգաղթած հայերի նոր բնակավայրերի մեծադիր քարտեզը, կարևորագույն հայկական քաղաքների լուսանկարները, կոմպոզիցիոն նկարներով պատկերված գաղթի ընթացքը։

Ցուցահանդեսում երկու մեծ դահլիճներ տրամադրված են այնպիսի էքսպոնատների, որոնք մեզ բազմակողմանիորեն ծանոթացնում են Արևելյան և Արևմտյան Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեցող բազմաթիվ ու բազմատեսակ արհեստներին և ազգաբնակչության կրաղմունքի հիմնական ճյուղին՝ գյուղատնտեսությանը։

Սրահներում ցուցադրված են գյուղատնտեսության մեջ գործածվող համարյա բոլոր տեսակի գործիքները՝ մանգաղներ, գերանդիներ, եղաններ, բահեր, գութան, ինչպես և արհեստներին վերաբերող աշխատանքային գործիքներ, տնային և կենցաղային առարկաներ և այլն։

Բազմաթիվ գրաֆիկ և յուղաներկ նկարներ արտացոլում են հայ ժողովրդի կենցաղային զանազան սովորություններ, կրոնական ծիսակատարություններ, ժողովրդական խաղեր և այլն։

Դիտողի ուշադրությունն է գրավում XIX դարի առաջին կեսի գյուղացու տան մակետը և բնական մեծությամբ պատրաստված դարբնոցը, որտեղ պատկերված է աշխատանքի պրոցեսը, կտավագործի դազգահը, մանածագործի ճախարակը, բրուտի պտուտակ չարխը։ Հատուկ ցուցափեղկերում դասավորված ասեղնագործության, արծաթագործության և ոսկերչության արտադրանքի նմուշները խոսում են Հայաստանի արհեստների բազմազանության մասին։

Ցուցահանդեսը վերջանում է XIX դարի առաջին կեսի կուլտուրային նվիրված բաժնով։ Ուշադրություն է գրավում աշխարհի տարբեր մասերում տարածված հայ կուլտուրայի կարևորագույն օջախների՝ դպրոցների ու տպարանների ռելեֆ քարտեզը։ Հատուկ ցուցափեղկ է հատկացված պարբերական մամուլին, գիտության տարբեր ճյուղերի՝ բժշկության, մաթեմատիկայի, աշխարհագրության, պատմության վերաբերյալ գրականությանը։ Այստեղ մենք տեսնում ենք նշանավոր գրողների, պատմաբանների, կուլտուրայի ու արվեստի այլ գործիչների պորտրեները այդ ժամանակ հիմնադրված կուլտուրական խոշորագույն օջախներ հանդիսացող Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի, Մուրադ Ռաֆայելյան դպրոցի և այլ դպրոցների լուսանկարները։

Հայ ժողովրդի XVI—XVIII դարերի և XIX դարի առաջին կեսի պատմությանը նվիրված ցուցահանդեսը ծանոթացնում է հայ ժողովրդի անօրինակ սխրագործությունների հետ և օգնում դաստիարակելու մեր երիտասարդությանը Սովետական հայրենիքի նկատմամբ անսահման նվիրվածության և հայրենասիրության ոգով։

Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ